

Կենսագրական Գիծեր¹
Երջանկայիշատակ Ս. Թորգոմ Արք. Մանուկեանի
Պատրիարք Առաքելական Աթոռոյս Երուսաղէմի

Ամենապատիւ Ս. Թորգոմ Արք. Մանուկեանը ծնած է Իրաք, Պաղտատէն մէկ ժամ հեռու Պաքուկա գիւղաքաղաքին մօտ հաստատուած եւ Վանէն տարագրուած հայ գաղթակայանին մէջ, 16 Փետրուար 1919-ին: Իր հայրը՝ Իվան, ծնած է Հայաստան, Դիլիջան, եւ մայրը՝ Նարկիզ Վարդանեան, Աղբակ (Վան): Բազմանդամ Ընտանիքի զաւակ վեց եղբայրներ եւ մէկ քոյր՝ Անդրանիկ, Համազասպ, Աւետիս, Սուրէն, Խաչիկ, Վարդան եւ Ծովիկ:

Աւագանի անունով՝ Աւետիս, շրջանաւարտ ըլլալով Պաղտատի Ս. Թարգ-մանչաց նախակրթարանէն, 1931 Նոյեմբեր 1-ին կ'ընդունուի աշակերտ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի:

1936 Օգոստոս 2-ին, իր դասընկերներով Սարկաւագ կը ձեռնադրուի Թորգոմ Պատրիարք Գուշակեանի ձեռամբ:

1939, Յուլիս 23-ին, կուսակրօն Արեղայ կը ձեռնադրուի ձեռամբ Մեսրոպ Պատրիարք Նշանեանի եւ կը վերակոչուի Թորգոմ Արեղայ:

1936-1946 Յուլիս 10, Թորգոմ Արեղայ Մանուկեան, որպէս անդամ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան, կը ծառայէ՝ զանազան պաշտօններ ստանձնելով, որպէս՝ ուսուցիչ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի, իսկ Ժառանգաւորաց Վարժարանի մէջ՝ դասախօս եւ մարզանքի ուսուցիչ, տպարանի տեսուչ, «Սիոն» պաշտօնաթերթի խմբագրութեան անդամ, Ժառանգաւորաց Վարժարանի փոխ-տեսուչ:

Վարդապետական աստիճան կը ստանայ 1946, Մայիս 16-ին, Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ, ձեռամբ՝ Կիւրեղ Պատրիարք Իսրայէլեանի:

Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ Տիրան Եպս. Ներսոյեանի հրաւերով Նիւ-Եորք կը ժամանէ 1946 Յուլիս 26-ին եւ կը նշանակուի Հոգեւոր Հովիւ Ֆիլատելֆիոյ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ: Նոյն ատեն եղած է այցելու Հովիւ Ռիչմընտ Վիրճինիայի եւ Ուաշինկթըն մայրաքաղաքի հայ համայնքներուն: Ան երկու շրջանով անդամ ընտրուած է Թեմական Խորհուրդին (1947-1954):

1951 Նոյեմբերին, կը նշանակուի Թեմակալ Առաջնորդի Փոխանորդ եւ կը փոխադրուի Նիւ-Եորք: Ան կը ստանձնէ կառուցուելիք Ս. Վարդան Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի յանձնախումբի, Յարաբերութեանց Գրասենեակի Վարիչի պաշտօնը, ինչպէս նաեւ՝ Լոնկ Այլընտի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ համայնքին կազմակերպման եւ այցելու հովիւի պարտականութիւնները:

1955-ին Երուսաղէմ կը վերադառնայ: Պաշտօններ կը ստանձնէ իբրեւ Միաբանական Ժողովի Ատենապետ, Դիւանապետ, Տեսուչ եւ ուսուցիչ՝ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի, ուսուցիչ՝ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի:

¹ Կենսագրութեան հիմնական մասը վերբերուած է Գեորգ Բաղդիշեանի «Երուսաղէմի Թորգոմ Պատրիարք Մանուկեանի Գեղարուեստական Արձակը» գրքէն, քիչ մը յապաւումներով ու մեր կողմէ յաւելումներով:

1960-ին, Թորգոմ Վարդապետ, վերադառնալով Միացեալ Նահանգներ, կը հետեւի Գէյմպրիճ Մասաչուսէցի Եպիսկոպոսական Աստուածաբանական Վարժարանի դասընթացներուն:

1962-ին, կ'ընտրուի Առաջնորդ Գալիֆորնիոյ Թեմին: Իր առաջնորդութեան չորս տարիներուն զարկ տուած է Թեմի համայնքներու կրօնական, մշակութային եւ տնտեսական աշխատանքներուն:

1962-ին, առաջին անգամ ըլլալով, կ'այցելէ Ս. Էջմիածին՝ մասնակցելու համար Ազգային Եկեղեցական Ժողովին եւ, իբրեւ Թեմակալ Առաջնորդ, Եպիսկոպոս կը ձեռնադրուի Հոկտեմբեր 14-ին, Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհ. Կաթողիկոսի ձեռամբ:

Թորգոմ Եպիսկոպոս Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ կ'ընտրուի 1966-ի Ապրիլ 30-ին եւ կը պաշտօնավարէ 24 տարի՝ հինգ անգամ վերընտրուելով:

1990-ի Փետրուար 1-ին կը վախճանի Երուսաղէմի Պատրիարք՝ Եղիշէ Արք. Տէրտէրեան, որու թաղման կարգէն յետոյ, Փետրուար 9-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Ընդհանուր Ժողովը Պատրիարքական Տեղապահ կ'ընտրէ Թորգոմ Արք. Մանուկեանը: Պատրիարքի ընտրութիւնը կը կատարուի Մարտ 22-ին: Ընտրութեան Իսրայէլեան եւ Յորդանանեան պետական ճանաչումը ստանալէն յետոյ, Հոկտեմբեր 27-ին Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ տեղի կ'ունենայ գահակալութեան արարողութիւնը:

Թորգոմ Պատրիարքի առաջին ու ամենակարեւոր ձեռնարկը կ'ըլլայ Պատրիարքարանի գրասենեակներու վերակազմութիւնը եւ անոնց կանոնաւոր ընթացքը: Այս ընելով, գրասենեակներ կ'օժտուին նոր համակարգիչներով: Պատրիարքարանի հին սիւսերէն հետեւող հաշուապահական դրոյթը կ'ունենայ կանոնաւոր ընթացք: Երկրորդ կարեւոր ձեռնարկը կ'ըլլայ Ժառանգաւորաց Վարժարանի վերակազմութիւնը եւ ուսումնական ծրագիրը: Կը վերակազմուի ուսումնական ծրագիր եւ Հայրենիքէն կը սկսուի դասախօսներ հրաւիրելու սովորութիւնը: Ժառանգաւորաց Վարժարանի համար ուսանողներ հաւաքելու դրոյթը քաղաքական դժուարութիւններու պատճառաւ, Թորգոմ Պատրիարք ուշադրութիւն դարձուց Հայրենիքի վրայ ու մինչեւ օրս Ամենայն Հայոց Հայրապետութեան սատարումով, Ժառանգաւորաց Վարժարանի ուսանողներու հոյլը կուգայ այնտեղէն: Երրորդ կարեւոր ձեռնարկը կ'ըլլայ Միաբանից շէնքի հիմնական վերանորոգութիւնը, որն կ'աւարտի 1994-ին ու այսպիսով միաբան հոգեւորականներ կ'ունենան արժանավայել բնակարաններ աւելիով իրենց ծառայութիւնը բերելու սրբատեղիներէն ներս:

Ամենայն Հայոց Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսի վախճանումէն յետոյ (1994 Օգոստոս 19), Թորգոմ Պատրիարք կ'ընտրուի Կաթողիկոսական Տեղապահ (Օգոստոս 25) մինչեւ Ամենայն Հայոց Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսի ընտրութիւնը եւ գահակալութիւնը (5 Ապրիլ 1995):

Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութենէն յետոյ, Թորգոմ Պատրիարք կը վերադառնայ Երուսաղէմ Պատրիարքութեան գործերը շարունակելու համար:

Թորգոմ Պատրիարքի Սրբատեղեաց հանդէպ աէրը միշտ զգալի եղած է: Իր օրով, կը վերաշինուին Ս. Յարութեան Տաճարի ազգապատկան Իւղաբերից նուիրուած Խորանը եւ Աստուածամօր Ուշաթափման սրբատեղին 1992-1993: Իր ջանքերով իրագործուեցաւ Սուրբ Յարութեան Տաճարի Գմբէթին վերանորոգութեան աշխատանքը հանդերձ Յունաց

եւ Լատինաց Պատրիարքարաններուն, եւ որուն պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1997-ին:

Յունուար 2000-ին, մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Ծննդեան 2000-ամեակի առիթով, Թորգոմ Պատրիարք կազմակերպեց բարեբաաստիկ տօնախմբու-թեան դէպքը Բեթղեհէմի Ս. Ծննդեան Տօնին օրը եւ անոր հետեւող շաբաթը, հրաւիրելով Հայրենի Պետութեան Նախագահ՝ Վսեմաշուք Տիար Ռոպերթ Քոչարեանը եւ Ամենայն Հայոց Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը, որոնց միացան ուխտաւորական խումբեր Միացեալ Նահանգներէն եւ Հայրենիքէն:

Հիմնովին վերանորոգուեցաւ Բեթղեհէմի Հայոց Վանքի ներքնասրահը Սպանական Կառավարութեան ծախքով, իսկ վերելի միաբանից սենեակները՝ Սուրբ Աթոռոյ ծախքով, 2003-ին:

Վերանորոգուեցաւ Կիւլպէնկեան Մատենադարանը բարերարութեամբ՝ Կիւլպէնկեան Հաստատութեան, եւ որու բացումը կատարուեցաւ 2007-ին:

Հիմնովին նորոգուեցան Յոպպէի Ս. Նիկողայոս եւ Ռամէի Ս. Գէորգ վանքերը, որոնց բացումը տեղի ունեցաւ 2009 Սեպտեմբերին եւ Հոկտեմբերին:

Վերանորոգուեցաւ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի երկրորդ յարկը եւ անոր ներքնասրահը ամբողջութեամբ: Այդ առիթով, վարժարանը օժտուեցաւ համակարգիչի յատուկ բաժնով, գրադարանով եւ տարրալուծարանի յատուկ սարքերով, Էլ-Հիւսէյնի կազմակերպութեան ծախքով, 2009-ին: Վերանորոգուեցաւ նաեւ վարժարանի սրահը բարերարութեամբ՝ Հայաստանի Պատուոյ Հիւպատոս՝ Տիար Յուլակ Մոմճեանի:

Հիմնովին նորոգուեցաւ Մարտիկեան Թանգարանը Welfare Association կազմակերպութեան նիւթական նպաստով:

Արժանավայել է Թորգոմ Պատրիարքի վարչագէտ, երաժիշտ ու բանաստեղծ տիտղոսներու կողքին, աւելցնել նաեւ Շինարար Պատրիարքը տիտղոսը:

Իբրեւ երաժիշտ ան երգչախումբեր կազմակերպած է եւ համերգներ ներկայացուցած Պաղտատի մէջ 1946-ին, Ֆիլատելֆիա եւ Նիւ-Եորք 1946-1951, Երուսաղէմ եւ Ամման 1957-1959: Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմին մէջ եւ Թեմին Առաջնորդ Տիրան Արք. Ներսիսեանի թելադրութեամբ՝ 1947-ին կազմակերպած է «Դպրաց Դասե-րու Ընկերակցութիւնը», հրատարակած է ձայնագրութեամբ «Պատարագի Մէջ Սարկաւագի Ուղեցոյցը», «Սարկաւագ» ձայնապնակը եւ ձայներիզը 1960, «Ձեռաց Պատարագամատոյցը» 1963 (Հայերէն եւ Անգլերէն տառադարձութեամբ ու թարգմանութեամբ՝ Կոմիտասեան եւ Եկմալեան մայր եղանակով), «Արեւագալի Ժամեր-գութիւն» (Վարդան Սարգսեանի դաշնաւորումով) 1957, «Պաշտօն Հանգստեան» 1963, «Բացատրական Սարկաւագի Ուղեցոյց» 1985, «50 Երգեր Շահան Ռ. Պէրպէրեանի» 1983, «Կոմիտասի Հանճարը» (Հայերէն եւ Անգլերէն) 1987, «Հայ Եկեղեցւոյ Կորուստը Եղեռնին» 1972, «Յարութեան Ճաշու Շարականներ» (Վարդան Սարգսեան) եւ «Ուրը Չայներու Սկսուածք» 1964, «Արարողութիւնք Ս. Յակոբի եւ Ս. Տեղեաց Մէջ» 1995, Ս. Էջմիածին, «Շաբաթական Թափօրի Երգեր» 1994, «Անկարելի Սէր» (Հայերէն-Անգլերէն) 2001, «Վանքի Օրեր» 1972, «Վանքի Օրեր» (Հայերէն եւ Անգլերէն, թարգմանութիւն՝ Ա. Քէշիշեանի) 2001, «Օրագրութիւն Սարկաւագի եւ Քառասունք Թորգոմ Արեղայի» Կ. Պոլիս 2001, «Օրագրութիւն, Քառասունք, Ուսուցիչ եւ Ականջող Տուր Ինծի» Երուսաղէմ 2001, «Խումբին Հետ» 1957, «Հայ Ուխտաւոր» 1957:

Թորգոմ Պատրիարք Մանուկեան կատարած է նաեւ Անգլերէնէ Հայերէն թարգմանութիւններ.- «Հոգեբանական Եօթը Դիմանկարներ» Երուսաղէմ 1994,

«Հոգեբանական Եօթը Դիմանկարներ» Արեւելահայերէն, Ս. Էջմիածին 1995, Անգլերէն քերթողութիւն՝ «Վերելք» 1994, Շէյքսպիրի «Սօնէթներ» 1996, «Արձագանգուն Մեղեդի» 1999:

Թորգոմ Պատրիարքի ջանքերով եւ Կիւլպէնկեան Հաստատութեան մեկենասութեամբ հրատարակուեցան շարք մը յոյժ կարեւոր հրատարակութիւններ: Անոնցմէ պիտի թուենք կարեւորները.-

Գրիգոր Տաթեւացիի «Գիրք Հարցմանց» 1993, Տաթեւացիի «Ամարան ու Ձմերան» հատորները 1998, «Գիրք Թղթոց» 1994, Յովհաննիսեանցի «Պատմութիւն Երուսաղէմի» Ա եւ Բ հատորներ 1999, Սաւալանեանցի «Պատմութիւն Երուսաղէմի» 2000, «Օրագրութիւն Բերդեհէմի Ս. Ծննդեան Ս. Տաճարի 1934-1981» 2000, «Օրագրութիւն Ս. Յարութեան Տաճարի» 2001:

Թորգոմ Պատրիարք եղած է անդամ «Միացեալ Նահանգաց Եկեղեցեաց Ազգային Խորհուրդի Վարչական Մարմնի», «Կրօնքը Ամերիկեան Կեանքին մէջ Կազմակերպութեան», «Խղճմտանքի Կոչ Հիմնարկութեան» եւ «Ամերիկայի Սուրբ Գրոց Ընկերութեան Վարչական Մարմիններուն»:

Թորգոմ Պատրիարքին Պատուոյ շքանշաններ կը տրուին՝

Ա.- 1983-ին Նիւ Եորքի Ճէնըրըլ Թէոլոճիքըլ Սէմինարիէն «Աստուածաբանութեան Տօքթօր»ի աստիճանով:

Բ.- 1986 Յուլիսին, Ամերիկայի Ազատութեան Արձանի 100-ամեակին առիթով, Նիւ Եորքի քաղաքապետ՝ Էտուըրտ Քաջի գնահատանքով:

Գ.- Հոկտեմբերին, Էլլիս Ալլընտի եւ Ազատութեան Արձանի Հիմնարկութեան կողմէ՝ ի գնահատութիւն իր արդիւնաւոր առաջնորդութեան եւ գործունէութեան:

Դ.- 1990 Յունուար 28-ին, իր Քահանայական Ձեռնադրութեան 50-ամեակի եւ ծննդեան 70-ամեակին առիթով, «Կրօնքը Ամերիկեան Կեանքին Մէջ Կազմակերպութեան» կողմէ Թորգոմ Պատրիարք կ'ընտրուի որպէս «Տարուան Մարդը» եւ իրեն կը յանձնուի «Տքթ. Ըրլ Փլէզընթ մրցանակը»:

Ե.- 2001-ին, Ս. Էջմիածնի մէջ, 1700-ամեակի տօնակատարութեանց ընթացքին, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Վեհափառ Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշան կը շնորհէ Թորգոմ Պատրիարքին:

Թորգոմ Պատրիարքի հայրական սէրն ու խնամքը հանդէպ իրմով գլխաւորուած Միաբանութեան եւ Հայ Գաղութի զաւակներուն միշտ զգալի եղած է եւ օրինակելի:

16 Փետրուար 2010ին, ի ներկայութեան բարձրաստիճան հոգեւորականներու եւ հիւրերու, նշուեցաւ Թորգոմ Պատրիարքի ծննդեան 91-րդ, Քահանայութեան 70-րդ եւ գահակալութեան 20-րդ տարեդարձը:

Ամենապատիւ Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, յետ երկարատեւ հիւանդութեան՝ ի Տէր հանգեաւ Ուրբաթ, 12 Հոկտեմբեր, 2012, առաւօտեան ժամը 9:30-ին:

«Յիշատական արդարոց օրհնութեամբ եղիցի»: